ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ԳՈՐԾԻ ԱՆՈՒՆԸ	ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐԸ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԱՆՈՒՆԸ	ԱՇԽԱՏԱԿՑԻ ՀԱՄԱՐԸ

Այս ծանուցագիրը հաստատում է Ձեր որոշումը նամակագրությունը ստանալ էլեկտրոնային ծանուցման ճանապարհով: Եթե Դուք էլեկտրոնային ծանուցումներ չեք ցանկանում, խնդրում ենք անմիջապես զանգահարել Ձեր Տարածաշրջանի նպաստների բաժանմունք (County Welfare Department) (CWD) _____ հեռախոսահամարով:

Որպես էլեկտրոնային ծանուցումներ ստանալու պայմանագրի մաս՝ Դուք համաձայնվել եք՝

- Նամակագրությունը ստանալ CWD-ից էլեկտրոնային ծանուցման ճանապարհով: Միայն Էլեկտրոնային ծանուցման համաձայնագիրը ստորագրած ընտանիքները կստանան ազդանշաններ նամակագրությունը իրենց ապահով անձնական առցանց հաշվի մեջ դիտելու համար:

- Ձեր էլեկտրոնային փոստի հաշվին ուղարկած բոլոր էլեկտրոնային ծանուցումները կարդալ և դիտել Ձեր ապահով անձնական առցանց հաշվի միջոցով:

- Ստուգել Ձեր էլեկտրոնային փոստի հաշիվը կանոնավոր կերպով (խորհուրդ ենք տալիս առնվազն յուրաքանչյուր երեք օր), որպեսզի համոզվեք, որ ժամանակի առումով զգայուն նամակագրությունը ժամանակին եք տեսել:

- CWD-ին տեղեկացնել, եթե Ձեր էլելտրոնային փոստի հասցեն փոխվի՝ լրացնելով նոր Էլեկտրոնային ծանուցման համաձայնագիրը փոփոխությունից տաս օրվա ընթացքում:

- Որ Ձեր անձնական ապահով առցանց հաշվին ուղարկված ծանուցումները համարվում են ստացված Ձեր կողմից, երբ Ձեր էլեկտրոնային փոստը ստանա էլ-ծանուցումը, նույնիսկ եթե Դուք չեք կարդում դրանք:

- Որ եթե խնդրեք, CWD-ն Ձեզ պետք է տա Ձեր անձնական ապահով առցանց հաշվին հասած ցանկացած փաստաթղթի թղթային պատճենը:

- Որ CWD-ն կվերադառնա թղթային նամակագրության ավանդական ճանապարհին, եթե էլեկտրոնային ծանուցումները՝ ուղարկված Ձեր էլեկտրոնային փոստին, չեն հասնում Ձեր մատակարարած էլեկտրոնային փոստի հասցեյով:

- Որ ցանկացած ժամանակ կարող եք դադարեցնել Ձեզ ուղարկվող էլեկտրոնային ծանուցումները: Դա անելու համար, Դուք միայն պետք է զանգահարեք CWD և տեղեկացնեք նրանց թղթային նամակագրությանը վերադառնալու Ձեր որոշման մասին: